

ուաջն առնել: Տարիներու փորձը ցուցուց սակայն թէ սխալ էր հաշիւը. երեքն ալ հայրապետօրէն ապրիլ կ'ուղէին ի հաշիւ Աթոռին, որուն դանձարանը դատարկ էր եւ ծանրաբեռնուած պարտքերով:

Այս շրջանին Այրարատեան դաշտի վրայ կը ծածանէր օսմանեան մահիկը: Աղմկալից էր հոն քաղաքական կեանքը եւ մատնուած դրեթէ անիշխանութեան: Օսմանեանց եւ Պարսից մէջ կը շարունակուէին դեռ թշնամութիւնները: Երկրին տնտեսական տաղնապր ծայրայեղ դրութեան հասած էր. ժողովուրդն եւ եկեղեցին ենթարկուած էին անօրինակ հարստահարութիւններու եւ հարկապահանջութեանց:

Երեք կաթողիկոսներու հոգաբարձութեան յանձնուած էին եկեղեցին եւ ժողովուրդը. երիցագոյնն էր Դաւիթ, որ «յառաջագոյն եւ նախ էր լեալ կաթողիկոս քան զՄելքիսէթն. եւ աւուրբք եւ ալեօք եւս ծեր էր» (Դաւր. 204): Սա թոյլ էր բնաւորութեամբ, երկչոտ եւ անընդունակ առաջնորդութեան, մանաւանդ այն դժուարին տարիներուն. ընդհակառակն Մելքսեդեկ Գառնեցի, զոր Դաւիթ էր օրհնած աթոռակից, «զի լիցի ինքեան ընկեր եւ ձեռնտու», կը ներկայանայ խիզախ, տոկուն եւ դժուարութեանց դիմադրաւոր անձնաւորութիւն մը, բայց միանգամայն բիրտ եւ խստաբարոյ բնաւորութեամբ, անուս եւ կըքոտ: Գիտէր ահ ներշնչել շրջակայից եւ զուրազալ դժուարին կացութենէ յաղթական,